

ՀՏԵՄԵՐԸ

ՊԻՏԸՆԻ ԳԻՏԵԼՆԸՑ

ՀԵՏՈՐ 4.

ՀԱՅՏԵՄԵՐ 1 1842

ԹԻՒ 46



Սանկադոն

Եւ երեսիս դուռը դրած Սէյլանցոյ պատկերը կը ներկայացունէ մեզի Սէյլանի բնակիչներուն պաշտօնը երեւակայական չաստուածներուն կամ կուսքերուն մէկը : Եւ չաստուածուհիս պաշտօնը յայտնաբէս կրտսնը վի իր ու իրեն պաշտօն մատուցանողներուն զործքովը , քովը կայնողները երկու կնիկներ են՝ որոնք իրենց զաւակները չաստուածուհիին բերեր մատուցեր են , ու ան ալ զանոնք ուտելու վրայ է :

Բայց կուսպաշտից երկերներուն մէջ միայն Սէյլանի մէջ չէ , որ ծնողքները իրենց զաւակները սպաննելը իբրեւ ընդունելի պաշտօն մը կը քաղեն իրենց կուսքերուն : Հնդկաստանի մէջ ալ աս նոյն տարրողութիւնը կայ , ու Վարտ (Ward) հեղինակը ասանկ կըսէ ասոր վրայով :

“Օրիսայի բնակիչները՝ ու Պէնկալայի արեւելեան կողմերը բնակողները շատ անգամ իրենց զաւակները կը նկա չաստուածուհիին կը նուիրեն : Եւ բարբարոսական

արարողութեանս պատճառը աս հետեւեալն է : Երբոր կնիկ մը երկար ատենէ ամուսնացած ըլլայ՝ ու զաւակ չունենայ, էրիկը՝ կամ կնիկը՝ և կամ երկուքը մէկ տեղ կընկա չաստուածուհիին ուխտ կընեն՝ որ եթէ զաւակ ծնանելու օրհնութիւնը պարգեւէ նէ անոնց, առջնեկ զաւակնին իրեն զոհ ընեն : Թէ որ աս ուխտադրութենէս ետքը զաւակներ ունենան, անդրանիկը իրեն կամ չորս տարի՝ կամ աւելի ևս կը սնուցանեն, ու ետքը գետին մէկ սրբազան կողմը լուացվելու համար տօնախմբութեան օր մը գալուն՝ տղեկը հետեւին կառնեն ու չաստուածուհիին կընծիւրեն զանիկա . տղին սիրտ կուտան որ չի վախնայ առաջ երթայ գետին մէջը, մինչև որ ջուրին աւրագութիւնը կառնէ կըտանի անիկա . կամ թէ իր գազանաբարոյ ծնողքը կըբռնէ ջուրին յորձանքին կուտան ողորմելին : Պէն կալայի հիւսիսային կողմերը գլխաւորաբար աս հետեւեալ սարսափելի արարողութիւնը տիրապետած է : Թէ որ փոքրիկ տղեկ մը հիւանդանալով ծեծ չուզէ ու տեղ, կըսեն թէ չար հոգիի մը ներգործութեանը տակը ինկած է ան : Ուստի ասանկ տղան երբեմն սակաւի մը մէջ կըգնեն ու մէկ ծառէ մը կըկախեն, ուր որ ան չար հոգին կըկարծեն թէ կըբնակէ : Ինչհամար պէս մըջունները կամ գիշատիչ թռչունները կըսպաննեն խեղճը, բայց երբեմն ալ զանցաւորութեամբ կըկորսովի : Հոգեւորականի հիւսիսային արեւելեան կողմերը աղջիկ զաւակները ծնածին պէս զոհ ընելու զարհուրելի սովորութիւնը՝ անյիշատակ ժամանակէ ի վեր կըգործածվէր : Հոգեւորականցիք աս սովորութիւնը կընծայեն պարամիսի մը մարդարեւութեանը որ զուլակեր է թէ Կուրիփուսինկու թագաւորին ցեղը աղջիկի մը ձեւով իր իշխանութիւնը պիտի կորսնցունէ : Ուրիշ կարծիք մալ աս է թէ աս սարսափելի սովորութիւնը նը ծագած է ամուսնութեան օրհնքէն՝ որ հարսին հայրը կըպարտաւորէ գրեթէ աստուածային յարգութիւն մը տալ իր փեսին : Ուստի մեծատունները իրենց աղջիկ զաւակին պատճառովը ինքըզինքնին ա-

սանկ նուաստացունէլ չուզելով մատաղ մանուկը կըկորսնցունեն : Պունձալի՝ ու անոր մօտաւոր սահմաններուն մէջ շատ ցեղեր ու պրամիսներ կան որոնք իրենց աղջիկ զաւակը ծնածին պէս կըսպաննեն : Ինչպէս ցիք աս սարսափելի արարողութիւնս խափանելէն առաջ՝ հազարաւոր տղաք տարիէ տարի զոհ կըլլային իրենց սրբազան Կանգէս գետին . կըտեսնեմք որ արեւմտեան իրենց ողջ զաւակները տիրութեանը մէջը կընեւորեն, ու կըկայնեն զաւաններուն իրենց որսին վրայ ըրած կըռիւր կըգնեն : ու երբոր յաջողակ գտնուողը ուրիշներուն բերնէն կըյափշտակէր տղեկը՝ ու անոր ոսկորները կըկտորէր ու արիւնը կըծրէր, իրենք անգագայ արձանի պէս անշարժ կըկենային :

Իսանկ մանկազոհէր շինաստանի՝ Կաղաղական Ուկրաինայի կողմերուն՝ ու Լմբերկայի վայրինի ազգերուն մէջ ալ կը գտնուի : Իսանկ տեսարանները գրեթէ բոլոր կուպաշտից երկիրները հասարակ են : Իս կերպովս ու ասոր նման հազար տեսակ ուրիշ կերպերով հեթանոսները ամէն տեղ քաջայայտ կըցուցնեն, թէ բնական գորով մը ունենալէն զուրկ են իրենք :

Իրոք՝ ով հայրեր ու մայրեր, ով երեւտասարգներ ու պատանիներ մէյմալ նայեցէք աս գլուխին սկիզբը դրված պատկերին վրայ, ու նորէն մտածեցէք վերը պատմութեան վրայ . ու հարցուցէք զուր ձեռք թէ ի՞նչ բան է որ ձեր վիճակը այսչափ երջանիկ կերպով մը տարբեր ըլլաւ անոնց վիճակէն : Հիսուս Քրիստոսի աւետարանին ներգործութեան է՝ Քրիստոնէական հաւատքն է աս բանը ընող . և ան աւետարանը ան նոյն երջանիկ ներգործութիւնը պիտի ընէ ողորմելի հեթանոսներուն՝ որոնց վրայ պարսպանք հիւսնայ :

Մէյմալ հիւսիսային կողմերը շատ ծրնողներ ու շատ զաւակներ աս զարհուրելի մասպաշտութիւններէն ու արարողութիւններէն ազատեցան, ու Քրիստոնէից հոգեւոր ու մարմնաւոր վայելչութիւններուն հաղորդ եղան : Իսանկ եղաւ նաեւ ինկելութեան կողմերուն ու Սանտիէիական

կողմններուն միջ: Բնանկ եղաւ՝ ու ասանկ պիտի ըլլայ ամէն երկիրներու մէջ ուր որ Վրիստոնեայք աւետարանը կը խրկեն ու ժողովուրդը անիկա կընդունին: Աւրեմն չի պարտիր նք մեղքընալ ողորմելի հեթանոսները. չի պարտիր նք աղօթել անոնց համար. չի պարտիր նք ջանալ անոնց փրկուլ թեանը համար: Կարգացող՝ բան մը չի՞ դարձեալք որ ընես անոնց համար. թէ որ բան մը կընաս ընել՝ ըրէ՛, ու ուրիշներն ալ յորդորէ նոյնը ընելու. և աղօթէ՛ որ բոլոր աշխարհ՝ ճանչնայ զՎստուած, ու Յիսուս Վրիստոսը՝ որ ան խրկեց:

Հայ:

Եւ եմ հացն կենաց. Յօժ. 7. 35:

Սարգս ինչպէս որ մարմին ունի, անանկ ալ հոգի ունի. և ինչպէս որ մարմինը առանց հացի չի կրնար ապրիլ, անանկ ալ հոգին: Բրդարե՛, ճշմարիտ է որ հոգին չի կրնար մեռնիլ մարմինին պէս, բայց սակայն կայ տեսակ մը մահ որ կրնայ պատահիլ հոգիին: Հոգին մեռած կըսեալի թէ որ զՎստուած չի սիրէ ու չի պաշտէ. և կընանի մեռած մարմինի մը՝ որնոր մէկուն չի կրնար ծառայել. ու անտունը տուելի է Վստուծոյ, ինչպէս որ զգուշի է մեզի մեռած մարմին մը: Մեր Տէր Յիսուսը «Հայ» կը կոչվի, ինչու որ մեր հոգեւոր կեանքը իրմէն կուգայ մեզի. մենք մենէ յօժարութիւն կամ զօրութիւն չունինք զՎստուած պաշտելու: Թէ որ ինքը չօգնէ մեզի: Ինչպէս որ հացը օգուտ կընէ մեզի թէ որ ուտելու ըլլանք, անանկ ալ թէ որ մենք հաւատքով Վրիստոսի երթանք նէ բոլոր մեր հոգեւոր կեանքը կրնանք իրմէն ստանալ, ոչոքինքն զՎստուած սիրելու ու պաշտելու բոլոր մեր զօրութիւնը: Եւ մենք հիմայ կըրտնանք թէ ինչու համար Յիսուս «Հայ կենաց», և «կենդանի Հայ» կը կոչվի. անոնց՝ որ իրեն կը հաւատան կամ կոտորենին, ինքը կուտայ աս հոգեւոր կեանքը զՎստուած պաշտելու համար աշխարհիս մէջ, և աս միայն ան կեանքին սկիզբն է՝ որ ընաւ չի պիտի վերջանայ. քանզի ան որ աս հացէն կուտէ, «պիտի ապրի յաւիտեան»: Բայց Յիսուս ելելի մասնաւորապէս կըմեկնէ աս

ըսելով, «Բն հացը՝ որ ես պիտի տամ, իմ մարմինն է, որ ես պիտի տամ աշխարհի կեանքին համար»: Յիսուս Վրիստոս «մարմին եղաւ» մեզի համար, և ան մարմինով չարչարվեցաւ ու մեռաւ մեր մեղքերուն համար, որ մենք չի չարչարվինք ու չի մեռնինք յաւիտեան. հիմայ՝ ճշմարտապէս բերկրալից է աս խոսքըր հոգիին, ինչպէս հաճելի կերակուրը անօթի մարած մարմինին: Յիսուս Վրիստոսի մեղքի փրկելու համար մարդ ըլլալը կամ մարմին առնելը՝ արդարեւ ճշմարտապէս «հաց» է անոնց՝ որ իրենց մեղաւոր ըլլալը կը ճանչնան: Բնոնց տրտմալից հոգիները կընանին ան հացէն. քանզի աս մարդացեալ Փրկիչին մեզ յաւիտեանական տան ջանքէն փրկելու համար Վստուծոյ պատուիրաններուն ըրած հնազանդութիւնովը և խաչին վրայ քաջած չարչարաններովը մենք յաւիտեանական կեանքը կուենանք:

Կարգացող, թէ որ հացին վրայ միայն նայիս ու չուտեսնէ, քեզի օգուտ մը չի պիտի ընէ. և թէ որ Վրիստոսին վրայով միայն գիտնաս, և հաստատութեամբ ու սրտով իրեն չի գաս նէ հաւատքով փրկվելու համար, չես կրնար սնանիլ աս կենաց հացէն: Աւրեմն աղօթէ՛, աս խօսքը ըսելով. «Տէր, հանապազ տուր մեզի աս հացը»:

Ո՛հ, ինչպէս յիմար են անոնք որ կանարգեն աս հացը, և կը ջանան սնուցանել իրենց հոգիները կորստական բաներով: Կորստական կերակուրը կորսովելու մարմինին համար պէտք է, բայց աս աշխարհի բաները չեն կրնար սնուցանել մեր հոգիները: Եւ մարդիկ անանկ կը փափաքին աս աշխարհի հեշտութիւններուն, ինչպէս որ անօթի մարդը կերակուրին: Բայց աս հեշտութիւնները իրենց հոգիներուն կեանք չի պիտի տայ, երբոր իրենց մարմինները մեռնին: Աւրեմն ուրիշ բան մը չի կրնար հոգին կենդանի պահել, հապա միայն կենաց հացը: Եւ որովհետեւ չենք զիտեր թէ երբ մեռնելու ենք, անոր համար որչափ շատ կանուխ սկըսելու ըլլանք աս հացէն ուտելու՝ կանուխ ըլլալ չի սեղմիլը, ինչու որ «Բն է հացը որ երկինքէն իջած է, որ թէ մէկը ասկէց ուտէ նէ՛, չի մեռնիլ»:

Ընաջնորդեալ ինձ ով մեծ Եհնոփա
Ըս գառն՝ վշտալից՝ անբեր երկրիս մէջ
Եւ յամէն շարեաց զու զիս պաշտպանեալ
Որ պտուղ բերէ իմ՝ հոգիս անզեղջ:

Ես միշտ տկար եմ, բայց դուն զօրաւոր
Քաջալերէ զիս քու կարող ձեռքով
Ով դու Հաց կենաց Հացըդ երկնաւոր
Կշտացուր զիս որ զօրանամ հոգւով:

Ընդհանուր, իմ մայրենի ոչնայ:

Ողաճունութիւն ամէն կողմերուն բարձրա-
բերձ լեռները և ապառաժուտ անա-
պատները տեսակ տեսակ վայրենի ոչխար-
ներուն բնակարաններն են, որոնք մարդուս
ձեռքին տակը եղած աս տեսակը ընտանի
կենդանիներուն հետը շատ քիչ հանգամանք
ներով կրնան կապվիլ: Ըստնք թեթեւաշարժ
համարձակ և ուժեղ կենդանիներ են. խիստ
բարձր ու զառիվեր տեղերը կեցան, ուր
կից իրենց հետևող որսորդներուն աշխա-
տութիւնը անգոյնեցնող ծաղը կրնեն զա-
նոնք: Այլ կրնան ոչխարներուն մորթը բուր-
դով ծածկըված ըլլալուն տեղը մազով ծած-
կըված է: որ Զերմագոյն կլիմաներու տակ
բնակող կենդանիներուն վրայ կարճ կըլ-
լայ. բայց ըստ մեծի մասին աս մազերը են
հաստ՝ շիտակ ու խիտ:

Հիմայ հոս վայրենի ոչխարին ան տեսակը
կը պատմենք՝ որ Բարբաբոսաց աշխարհի ա-
պառաժուտ անապատներուն մէջ ու Լիբի-
կէի հիւսիսային ծովեզերքները կրքնակին:
Իր անունը ան երկրին Բարբերէն լեզուովը
Բուտատ կըսվի:


Իր անկախ ազատութենէն չի ստորովե-
լու աս անապատաբնակ կենդանին մարդկա-
յին տեսութենէն և անոր բնակութեանը
կողմերէն հեռու կը կենայ, պահելով զինքը
ան լեռնային երկրին ամայի սահմաններուն
մէջը, որոնք ապահով ապաստանարան ըլ-
լալ կը գտնայ իրեն: Իր կերպարանքովը
բնական անկախութիւն մը ունի՝ որ զարմա-
նալի կերպով կը տարբերէ զինքը ընտանի
ոչխարէն, և աս բնական անկախութիւնը
միշտ կը տեսնանք ամէն ան վայրենի կենդա-
նիներուն վրայ՝ որոնց տեսակէն ընտանիներ
ըլ ունինք քովերնիս: Լսիկա փորձով
հասկընալու համար պարտինք միայն դառ-

նալ մեր կլիմաներուն տակը բնակող կեն-
դանիներուն, որոնց վրայ աղէկ ծանօթու-
թիւն ունինք թէ ազատութեան և թէ նուա-
ճութեան կամ գերութեան վիճակի մէջ
քանի գերութեամբ կը յաղթի վայրենի նա-
պաստակը ընտանիէն. վայրենին արագա-
շարժ արթուն և սրնթիաց է, կարճ ձուա-
ձե ականջներով, պզտիկ ու վայելուչ գը-
լուխով, և բարեձե ու զօրաւոր անգամնե-
րով: Ընտանին գերի մըն է՝ գերիի ցեղէ
առաջ եկած, ու ամէն վայրկեան ստրկու-
թեան նշաններ կը ցուցնէ. դէմքին վրայի
նուաճութեան երևոյթը, մեծ ականջները
ու գլուխը, և խոշոր բայց ծանրաշարժ ան-
դամները մէկէն կը շարժեն զինքը: Ըս նոյն
հանգամանքները կը նշանակին նաև սաղին ու
բազին, որոնց թէ ընտանիները և թէ
վայրենիները ըստ բաւականին գիտենք:

Բարբաբոսութեան կողմանէ մէկ կենդա-
նի մը չի կրնար գերազանցել Բուտատէն.
Իր ոստնուր կամ ցաթկելը անխմանալի ա-
րագութեամբ կը կատարէ: Ընտանց առա-
ջուց շարժումներ մը ցուցնելու ուղղահայ-
եաց բարձրութեամբ խել մը ոտք վեր կը
ցաթկէ, ապահով կը կայնի անանկ զառի-
վեր տեղովանք ուր որ հազիւ թէ ոտք դնե-
լու տեղ կերևայ, խիստ բարձր գահա-
վէժներէն ինքը զինքը վար կը նետէ, մէկ
ժայռէն մէկալ ժայռը կը ցաթկէ աներ-
կիւղ համարձակութեամբ և առանց սխա-
լելու: Բայց իր բնութեանը և սովորու-
թեանցը մանրամասն հանգամանքներուն
վրայով բուն մը ստուգված չէ: Թռչունու-
ցիք՝ Գարապուսցիք՝ և նոյն ծովեզերքնե-
րուն քանի մը ուրիշ ժողովուրդները եր-
բեմնապէս աս վայրենի անասունը կը որսան,
և իր միսը պատուական կը համարին: Ի՞նչ
կերակուրը է լեռնային խոտեր. իր գլխա-
ւոր գոյնը է խաւարած դեղնադոյն սև. եղ-
ջուրները ուժով են, կըր և միայն դէպի
ետևուն դարձած: Ընթելի ծունկերուն վը-
րայի կնճռած մազերէն զատ վիզէն ու
կուրծքէն ալ երկան ու խառնուք մազեր
կոխված է: Ըս հազուադէպ և սքանչելի
կենդանիին մեծութիւնը լման մեծցած այծի
մը մեծութենէն է վերկէկ է:

Օտո՛րի վեր. Եօգուշ Եօգուրը:

Կապաստակ. Լաւշան: Սագ. Գալ: Բագ.
Եօրպէս:



Սանդիկի ստալայի շինելու գործարանները
խոշորացուցով պատկերված :

Սանդիկ :

Թէ որ մանրամասնաբար քննելու ըլլանք մամուկը՝ պիտի տեսնանք որ իր ետեւի կողմը չորս կամ վեց հատ փոքրիկ ոււռոյցներ կամ իր ոտայնը մանելու գործարաններ ունի , որոնցմէ զարմանալի կերպով դուրս կուտայ իր ոտայնին թելը : Եւ գործարաններուն իւրաքանչիւրը բազմաթիւ խողովակներ ունի , որոնք այնչափ շատ ու այնչափ բարակ են՝ որ գնդասեղի մը ծարին չափ տեղը հազար ծակէն էլեւ կը գտնուի : Եւսոնց ամէն մէկէն անդալի նրբութեամբ բարակ թելեր կելլան , ու անմիջապէս իւրաքանչիւր գործարանէ ելած թելերուն բոլորը աւանձին կը միանան մէյմէկ թել կըլլան . ետքը առ գործարաններուն ամէն մէկէն ելած բաղադրեալ թելերը մէկ մատնաչափի տասներորդ մասին չափ հեւանալէն ետեւ դարձեալ կը միանան , ու անանկ ամէնը մէկ թել մը կըլլայ . և ահա ստիկս է մեր տեսած թելը որով մամուկը իր ոտայնը կը շինէ : (Տես Շ տեսմ . Պիտ . Գիտ . Հատ . երկրորդ , էրես 15 :)

Երբ՝ ստանի բարակ թելն շինված է մամուկին ոտայնը . բայց նայինք թէ առ ցանցակերպ գործը ի՞նչպէս կը հուսովի , ի՞նչ գործիք հարկաւոր է առ ճարտարարուեստ գործիս : Մամուկը իր ոտայնը շինելուն միայն իր ոտքերուն ճիւղանները կամ կրնանք ըսել իր մատերը կը գործա-

ծէ , ընտրեան պարզեամբ գործիքները : Եւսոնցմով կը շիտկէ ու կը կարգադրէ իր գործարաններէն ելած մածուցիկ թելերը : Ու ասոնք էլեւ ինչ կատարեալ գործիքներ ըլլալու համար երկու ոտքերուն մատերը (գոնէ շատ տեսակներուն) տակի կողմէն սղոյտձեւ սանտրեր ունին՝ որոնցմով պէտք եղածին պէս կը զատէ ու կը գործածէ թելերը : Ու չէ թէ այսչափ միայն . շատ անգամ կը պատահի որ մամուկը բարձր տեղէ մը իր թելովը վար իջած ըլլալով նոյն թելովը կը կին վեր պիտի ելայ , ու անտեսնել ան թելը կը փաթթէ փոքրիկ գնտակ մը կը շինէ : Եւս ժամանակը սանտրածեւ մատերը չի գործածվիր՝ հապա միւս երկու ոտքերուն մէջ տեղը ուրիշ ոտք մը կը գործածվի , ու կը թրւի թէ յայտնապէս անսանկ գործ մը կատարելու համար իրեն տրված է :

Նոյաճ զարին սկիզբին ի՞նչ անկէտօքցին նկատելով թէ պարտեղի մամուկները իրենց հաւկիթները խողաներու մէջ կը պահեն՝ որոնց թելերը էլեւ ինչ հատ ու զի մացկուն են բան թէ ոտայնինը , խորհեցաւ տեսակ մը մետաքս շինել անկից . երբ որ փորձել սկսեց գտաւ որ թելերը իրարմէ չէին բաժնրվիրկոր . վստահ որոյ բարակ սանտրով սանտրելով ու բարակ մանել տալով մոխրագոյն մետաքսեղէն զինացկուն գոյացութիւն մը գտաւ : Եւս նիւթովս ձեռնոցներ ու գուլթաներ շինել տուաւ : Եւս որ վրայ փարիզի զետեւութեանց Վիպոլեմիայն սկսեց յուսալ թէ շատ օգուտ կրնայ

Ոտայն . Եւսոնցմէ :

քաղվել աս միջոտ կենդանիէս . վասնորոյ Ս . Ռօմուր (M. Reaumur) անուն մէկը կարդեց որ նայի քննէ աս նիւթը . բայց անոր ըրած փորձառութիւնը բոլորովն ոչինչը հանեց Մկաղեմիային ակնկալութիւնները : Ռօմուր ցուցուց թէ մամուկին գաղանային բնութիւնը անհնար կրնէկոր զանոնք մէկտեղ անուցանել ու պահելը : Չորս կամ հինգ հազար հատը զանազան խուցերու մէջ բաժնեց զանազան թրւով , յիսունէն մինչև երկու հարիւր հատ զնել լով մէկ խուցին մէջը . ու կերակրեց զանոնք ճանձերով ու մանր փետուրներու արունոտ ծարերով . բայց մեծերը իսկոյն կուտէին պղտիկները , անանկ որ քիչ ատենի մէջ ամէն մէկ խուցին մէջը մէկ կամ երկու մամուկ մնաց : Մամուկներուն մէկըմէկ ուտելու աս բնաւորութեանս կրն ծայէ Ռօմուր անոնց քիչութիւնը՝ իրենց բուններուն մէջը դրած բազմաթիւ հաւ կիթներուն նայելով : Եսանկով կերևայ թէ անհնար է աս կենդանիները ընկերութեամբ պահել . ու թէ որ հնար ալ ըլլա՞ր՝ էվելի տեղ ու հոգ կըհարկաւորէր քան որչափ իրենցմէ աւելւած արդիւնքը պիտի վճարէր : Եպրձումի շերամէն շատ էվելի մամուկներ պէտք էին անոնց հանած մետաքսին չափ մետաքս տալու , ու իրենց մետաքսը շերամիին չափ վալլուն ու դիմացկուն չի կրնար ըլլալ : Ռօմուր փորձեց թէ 2304 շերամը մէկ լիոր մետաքս կըշէնէ . և որովհետեւ ինքը կըկարծէ թէ տաներկու մամուկին գործը միայն մէկ շերամի գործին կըհաւասարի , 27,648 մամուկ պէտք են մէկ լիոր մետաքս շինելու : Եւ որովհետեւ միայն էվելին են որ աս խողաները կըշինեն իրենց հաւկիթները զնելու , կըկարծէ թէ նոյնչափ թրւով ալ արու մամուկներ պէտք են . անանկ որ՝ 2304 շերամի շինած մետաքսին հաւասար մետաքս աւելելու համար 55,296 մամուկ կըհարկաւորի պահել :

Հրեշտակ ինչ կայներ եր քով :

Քրիստոնէութեան առջի դարերուն սաստիկ հալածմանը մէջ մանկահասակ Քրիստոնէի մը վրայով կըվարդանէր թէ իր անողորմ հալածիչները իրենց անգթութեանը

թեանը հնարած տանջանքներէն էվելի չարաչար կըտանջէին զնէրը՝ որ պարտաւորէն ուրանալ իր Տէրը ու Փրկիչը : Եւ կար ատեն ան չարաչարներուն համբերէնէն ետեւ արձըկեցին զնէրը՝ զարմանալով իր յամաւորութեանը վրայ : Իր Քրիստոնէայ եղբայրները ևս զարմացան ու հարցուցին իրեն թէ ի՞նչ զորաւոր հաւատքով կըցաւ նուաճել ան կրակին զօրութիւնը , որ ոչ աղաղակ մը և ոչ հեծութիւն մը լսեցաւ իրմէն : « Երդարեւ տարապայման ցաւ կուտար ինծի ան » , բայց քաջասիրտ պատանին . « բայց իմ նեղութեանս յետին աստիճան սաստկանալուն հրեշտակ մը կայներ էր քովս , ու իր մատովը երկինքը կըցուցնէր » : Երբայր իմ , թէ որ մեղք մը գործելու կըփորձըվիսկոր , մտածէ քու մահը , և տու մտածութիւնը հրեշտակ մը պիտի ըլլայ քեզի : Երկինքին յոյսը քաջալերութիւն մը պիտի շնորհէ քեզի՝ որ աշխարհի ամենասաստիկ սպառնալիքները յաղթես . դժոխքին վախը պիտի մերկացունէ մեղքը իր աւերելոյթ զեղեցկութենէն . ու քու յետին աստիճանի փորձըվելը կրնայ կենդանութիւն ընծայել քու ջանքերուդ՝ ան խորհուրդով , թէ որչափ էվելի համբերես հիմա հոս , այն չափ էվելի պիտի ըլլայ քու վարձքդ հանդերձեալին :

Փօմբէյի ու Հեռոլանտի քաղաքներէն
բուն աւերումը :

Եշանաւոր բան մըն է որ աս երկու Հռովմէական ծաղկեալ քաղաքներուս յանկարծ աւերումը պատճառ ըլլան մինչև մեր ատենները կատարելապէս պահելու հին ժամանակի քաջարուեստ ճարտարութեան շատ օրինակները , որոնք ուրիշ կերպով շատոնց պիտի կորսըվէին : Հեռքուանիում քաղաքը անցած դարին սկիզբին յայտնըվեցաւ , գետինին երեսէն 70 ոտքէն մինչև 100 ոտք խորութեան մոխիրի քարերու ու լավայի տակը թաղված : Քանի մը տարիէն ետքն ալ Փօմբէյի երեսն ելաւ տաններ , կու կամ տաններչորս ոտք խորութեան տակ թաղված , ու մոխիրով և սունկ քարերով ծածկըված : Եւ քաղաքներուն երկուքն ալ Ռէսուվ լեռանը սաստիկ բորբոքըվը

աւերեցան՝ Յոմի Տեառն 79 : Ասիկա ան հրաբուխին առաջին բորբոքումն էր որ կը յիշատակվի պատմութեանց մէջ , թէպէտ և աս զիպուածէս առաջ շատ տարիներ շատ սաստիկ երկրաշարժութիւններ կը լային ան կողմերը , ու լեռն ալ կանուխ ժամանակներէն հետէ սաստիկ խռովութիւններու տեղ մը եղած ըլլալու երեւոյթը կը ցուցնէր : Եւ ջախջախ երկերը իր առասպելեալ գեղեցիկութեանը կողմանէ մեծահաշակ անուն ունէր : Բոլոր ծովէ գերեայ սահմանները փամբէյիէն մինչև Վաբօլի , ու բոլոր բարձր տեղերը մինչև Վիսուվիոսի բարձրակատար գագաթը , ազնուականաց ընտելութիւններով՝ գեղեցկադարձ պարտեզներով ու գեղերով ծածկըմէն էին , ու ան զուարթարար կլինային և արդաւանդ երկրին մէջը առողջութեան ու զօսանքի հետամուտ օտարականներուն խուռն բազմութեանը ժողովարանն էին :

Ահնէքա երկրաշարժութիւն մը կը յիշատակէ՝ որ Վիսուվիոսի մեծ բորբոքումէն վաթսուն տարի առաջ պատահեցաւ , ու փամբէյի մէկ մասը կործանեց , ու Հեւքուլանիոսի քիչ վնաս չի տըւաւ : Երձաններ ճեղքըմէն , վեց հարիւր ոչխար գետինը անցան , ու շատ մարդիկ խեղճերնին թուցին : Հետեւալ տարին ուրիշ երկրաշարժութիւն մը պատահեցաւ՝ երբոր Վերոն Վաբօլի էր , ու ինքնակալը կեցած ապարանքը ձգել երթալուն՝ անմիջապէս կործանեցաւ ան : Ասիկց ետքը ատեն ատեն յաճախ սասանութիւններ կը լային մինչև ան մեծ բորբոքումը , որ պատահեցաւ () դոստոս ամսու 23ին Յոմի Տեառն 79 : Աս բորբոքման ատենը Հեւքուլանիոսի՝ ինչպէս նաև փամբէյի քաղաքը մոխիրով ու քարերով միայն ծածկըմէն : Յիշեալ քաղաքներուն առաջինը հետեւալ բորբոքումներովը առաւել ևս խորունկ թաղվեցաւ՝ յաջորդաբար իջած հալած լայային առուներովը , որուն պատճառովը շատ է վելի դժուարին եղաւ անիկա փորել ու քննելը քան թէ մէկալը :

Պլինիոս փոքր մանրամասնաբար կը րտողըպէ աս զիպուածը իր երկու հաշակաւոր նամակներուն մէջ՝ որ գրեց Տակիտոսին , որոնց մէկուն մէջը իր մօրեղբօրը մահուանը պատմութիւնը կընէ , ու մէկալին մէջը իր

և իր մօրը փախուստը կընկարագրէ : Աս նամակները պատշաճաւոր կը դատինք աս տեղս դնել , մեր ընթերցողները անոնց ծանօթացունելու համար :

« Եւ ընդունելութեան արժանաւոր ըլլալ կը խոստովանիմ ձեր ինքզինը՝ մօրեղբօրս մահուանը պատմութիւնը ձեզի խրկելու , որպէս զի անոր վրայով աւելի ևս անվերջալ զըոյց մը ձգվի ետքէն եկողներուն . քանզի թէ որ աս զիպուածը ձեր գրեցովը հաշակվի նէ , վստահ եմ թէ անոր համբաւը յաւիտեան նշանաւոր պիտի ըլլայ : Եւ թէպէտ ինքը գժբարդութեամբ մը մեռաւ՝ որ ինչպէս միանգամայն գեղեցիկ երկիր մը աւերակներու տակ ծածկեց ու շատ բազմամարդ քաղաքներ ապականեց , անոնի ալ կը թուի թէ մշտաւ յիշատակութիւն մը կը խոստանայ իրեն : () Եւ անոր մասպատիկ ու երկարատեւ գործքեր շարազրեց , սակայն հաւանեալ եմ թէ ձեր անմահ գործքերուն մէջը անոր յիշատակութիւնը մեծապէս պիտի նպաստէ անոր անունը մշտնջենաւորելու : Եւ ջանիկ կը համարիմ ես անոնք՝ որոնք որ վերին նախախնամութիւնը որոշեց կամ պատմըմէն արժանաւոր գործքեր գործելու՝ և կամ կարգալու արժանաւոր եղանակով մը անոնք պատմելու կարողութիւններով , բայց կըրկնակի երջանիկ են անոնք՝ որոնք աս հաղուադիւտ ձիրքերուս երկուքովն ալ բարդաւաճած են , որոնց կարգին մէջը արդարապէս կրնայ դասվիլ իմ մօրեղբայրս , ինչպէս որ բուն իր գրուածքները ու ձեր պատմութիւնը քաջայայտ պիտի ցուցնէ : Վասն որոյ տարապայման յօժարութեամբ կը խոստարեմ . ու արդարեւ ես աս գործաւ ձեր հրամանը . ու արդարեւ ես աս գործաւ նութիւնը վրան պիտի առնէի , թէ և զեւթին ինծի յանձնած չըլլայիք անիկա : Ինքը առաւելին հետը Սիսենուս կըրկնար : () դոստոսի 24ին կէս օրէն ետքը ժամը մէկին ատենները իմ մայրս խնդրեց իրմէն մէկ ամպի մը նայիլ որ շատ անապուր մեծութիւն ու ձև ունէր : Ինքը արեգակին օդուորքալիէն նոր դարձած էր * , ու զինքը

* Զուովայեցիք սովորութիւն ունէին ամէն օր իրենց մարմինը խզով օծելէն ետքը՝ տապալին տեղ մը արեւին մէջը մերկ պառկել կամ պարզ տիւ , որ մեծապէս օգուտ ընծայել կրնայէր առողջութեան :

պաղ ջուրը խօթելէն ու թեթեւ ճաշ մը ուտելէն ետքը, իր գրքատունին սենեակը առանձնացաւ: Լ'նմիջապէս մէյմալ ելաւ ու դուրս գնաց բարձր տեղ մը՝ ուրկից կալող ըլլայ առաւել ևս յատակ տեսնալ տա խիստ անսովոր երևոյթը: Լ'յնչտի հեռաւորութենէն չէր որոշվերկոր թէ ո՞ր լեռնէն կելլարկոր տա ամպը, բայց վերջը գտնվեցաւ թէ Վ'եսուվ լեռնէն կելլարկոր ան: չեմ կրնար էվելի ստոյգ նկարադրութիւն մը ընել անոր վրայով՝ քան թէ սոճիի նմանցունելով անիկա: քանզի ծառի մը բունին ձևովը մեծ բարձրութեան մը ելաւ ան, որ վերի ծառէն ոտտերու նման ինքրզինքը տարածեց: տսիկա կարծեմ թէ պատճառեցաւ կամ անիկա վեր մղող յանկարծաշունչ սաստիկ հովով մը՝ որուն զօրութիւնը քանի վեր ելաւ նէ նըւաղեցաւ, և կամ նոյն խակ ամպին իր ծանրութիւնով՝ որով կրկին ետ ճնշըվելով տա կերպովը տարածեցաւ: երբեմն լուսաւոր կերեւար ան ու երբեմն մ'թնագոյն ու բծաւոր, իր հետը խառնըված հողին ու մոխիրին շատութեանը կամ քիչութեանը համեմատ: Լ'ս տարօրինակ երևոյթը իմ մօրեղծօրս փիլիսոփայական հետաքրքրութիւնը արթնցուց որ էվելի մօտէն նկատեանիկա: վասնորոյ հրամանն բրաւ նաւակ մը պատրաստելու, ու ինծի ալ ազատութիւն շնորհեց որ եթէ յարմար դատիմ նէ իր հետը երթամ: Բայց ես էվելօք ընտրեցի իմ ուսմանս պարապելու ետէէ ըլլալ: քանզի անանկ պատահեցաւ որ ինքը տա կերպը գործառնութիւն մը տրւեր էր ինծի: Երբոր ինքը տունէն դուրս կելլարկոր Բաստի կնոջմէն Վ'էկտինայէն տոմսակ մը ընդունեց, որ իրեն սպառնացող մօտայաւտ վտանգի մը վերջին շփոթութեանը մէջն էր: քանզի իր բնակարանը Վ'եսուվ լեռանը ստորոտը ըլլալուն ուրիշ ճամբայ չի կար փախչելու, բայց միայն ծովով, վասն որոյ կաղաչէր իմ մօրեղծօրս որ իրեն օգնութեան հասնի: Աստի ան ալ իր ղիտաւորութիւնը փոխեց, և ինչ որ փիլիսոփայական մտքով սկսեր էր, նոյնը ղիւցազնական մըտքի դարձունելով առաջ տարաւ: Հրամանն բրաւ նաւակներ իջեցունել ծովը ու ինքը

անձամբ անձին նաւը մտաւ ոչ միայն Վ'էկտինային՝ հապա շատ ուրիշներուն ալ օգնութեան հասնելու մտքով: քանզի աղնուսկանաց բնակութիւնները խիտ առ խիտ ծածկեր էին ատ գեղեցիկ ծովագերքը: Երբոր ինքը կաճապարէր դէպի ան տեղը՝ ուրկից ուրիշները յետէն շփոթութեան մէջ ինկած կը փախչէին, իր ուղիղ ընթացքը դէպի վտանգին տեղը շփոթեց: ու այնչափ հանդարտութեամբ և անխառն մտքով կերթար, որպէս զի ան սարսափելի տեսարանին վրայով իր քննութիւնները կարողանայ ընելու ու իր գրագիրին գրել տալու: Հիմայ ինքը անանկ մօտ էր ան լեռանը որ անոր կրակոտ մոխիրները՝ որոնք քանի առաջ երթար էվելի խիտ ու տաք կիջնային, սունկ քարերուն ու բորբոքած վէմերուն սե կտորներովը նաւերուն վրայ կիջնային: Բ'մանապէս վտանգի մէջ էին՝ ոչ միայն ծովին յանկարծ տեղատութիւնովը ցամաքը մնալու, հապա նաև ան մեծամեծ հատուածներէն՝ որ լեռնէն վար կը գլտուէին, ու բոլոր ծովագերքները կը լցունէին: Լ'ս տեղս կանկ առաւ մտածելու թէ արդեօք կրկին ետ դառնայ մի: բայց նուազարին անանկ ընելու զինքը խրատելուն ըսաւ անոր: «Բարդը օգնութեան կը հասնի արեւին: Փոմիոնիանոսին տար զիս»։ Փոմիոնիանոս անատենը Սթապիա կրկնար, ու արդէն իր բեռները նաւը խրկեր էր: ինչու որ թէպէտ և ինքը ան նոյն ստենը ստոյգ վտանգի մը մէջ չէր, բայց անիկա իր տեսութեանը տակը ըլլալուն՝ և արդարեւ խիստ մօտ ըլլալուն անոր՝ միտքը հաստատեր էր որ եթէ քիչ մը էվելնայ նէ ան, իսկոյն հովը փոխվելուն պէս ծովը ելլայ: Ինչ և իցէ հովը յաջողակ էր իմ մօրեղծօրս Փոմիոնիանոսին տանելու, որն որ գտաւ մեծ զարհուրանաց մէջ ինկած: Սօրեղծօրս խանդաղատութեամբ գրկախառնեցաւ անոր հետը, քաջալերելով ու յորդորելով զանիկա որ իր արիւթթիւնը պահէ: ու առաւել ևս անոր վախը իջեցունելու համար անշրփոթ եղանակով մը հրամանն բրաւ որ բաղնիք պատրաստվի: Ըրացվելէն ետքը մեծ զուարթութեամբ՝ կամ (որ նմանապէս ղիւցազնական գործ է) գոնէ ինքրզինքը անանկ ցուցնելով իրիկվան կերակուրի նառաւ: Լ'ս միջոցիս Վ'եսուվ լեռանը բոր-

բոքումը զանազան տեղերէն խիստ սաստկու-
թեամբ բոցեր կարծրկէր : որ գիշերվան
մթութիւնը առաւել ևս տեսանելի ու զար-
հուրելի կը գործէր ան : Բայց մօրեղբայրս
իր բարեկամին վախերը մեղմելու համար
հաւանեցուց անիկա , թէ ան տեսնուածը
միայն գեղերուն այրիին էր որ գ'ղջուկները
բոցերուն ձգելով զանոնք վախան գացին :
Ըսկից ետքը հանգստանալու առանձնա-
ցաւ , ու խիստ ճշմարիտ է թէ ինքը անանկ
քիչ շփոթված էր որ խորունկ քունի մը
մէջ ինկաւ . քանզի բաւական գիրութիւն
ունենալով՝ ու դժուարութեամբ շնչառու-
թիւն ընելով դուրսը կեցողները իրօք կը
լսէին իր խորհարու ձայնը : Հիմայ իր սեն-
եակը երթալու սրահը քարերով ու մոխի-
րով զրեթէ լեցած ըլլալուն՝ թէ որ էվելի
կենար հոն անհետար պիտի ըլլար իրեն դուրս
երլալու ճամբայ գտնալ . վասնորոյ պատ-
շաճ դատովեցաւ արթնցունել զինքը : Ըր-
թնցաւ ելաւ՝ ու զնայ փոմփոնիանոսին և
իր մնացած ընկերներուն քով : որոնք այն
չափ անհոգ չէին որ քնանալ մտածէին :
Հիմայ սկսեցին խորհուրդ ընել թէ արդեօք
որը մեծագոյն խոհեմութիւն է . տուներուն
աղաւնիքը՝ որ հիմայ յաճախ և սաստիկ
շարժումներով մէկ կողմէն մէկալ կողմը
կերելային , թէ դաշտերը փախչիլով ուր
որ այրած քարերը ու մոխիրները թէպէտ
և իրօք թէթե , բայց առատութեամբ մե-
ծամեծ հեղեղներու պէս կիջնային ու աւեր
ապականութիւն կը սպառնային : Ըս վա-
րանմանս մէջ միտքերնին հաստատեցին
դաշտերը ելլալ , երկու տեղերուն պակաս
վտանգաւորը սեպելով զանոնք . առաջա-
դրութիւն մը որ երբ մէկալները իրենց վա-
խերնուն աճապարելով կը գիմէին անոր ,
իմ մօրեղբայրս անյօժար ու զգուշաւոր մտո-
ծութեամբ մը ընդունեց անիկա : Ուստի
դուրս ելան՝ գլուխներնուն վրայ թաշի-
նակներով բարձր կապած . և իրենց բո-
լորտիքը ինկած քարերու փոթորիկին դէմ
իրենց բոլոր պատապարութիւնը առիկա էր :
Հիմայ ուրիշ ամէն տեղ ցորեկ էր՝ բայց
հոն խիստ տղջամղջին գիշերէն էվելի խո-
րունկ մթութիւն մը պատեր էր , որ ջահե-
րով ու բաղմատեսակ ուրիշ ճրագներով ե-

ղածին չափ փարատվեցաւ : Պատշաճաւոր
սեպեցին վարիջնալ ծովեղբրքը՝ որ տեսնան
թէ կրնան ապահովութեամբ ծովը ելլալ .
բայց գտան որ ալեքները տակաւին խիստ
բարձր ու խռովայոյզ կերպով մը կընթա-
նային : Հոն իմ մօրեղբայրս մէկ երկու կա-
թիլ պաղ ջուր խմելով իրեն համար փըռ-
ված լաթի մը վրայ պառկեցաւ , որ ատեն
անմիջապէս հրաւրու բոցերը՝ ու սաստիկ
հոտ մը ծծումբի՝ որ ան բոցերուն կարա-
պետն էր , մէկալները ցիրուցան ըրին , ու
զինքը պարտաւորեցին ելլալու : Այլաւ
կանգնեցաւ իր երկու սպասաւորներուն օգ-
նութեամբը՝ ու խկոյն ինկաւ մեռաւ , կար-
ծեմ թէ թանձր ու դարչահոտ շողով մը
խեղդելով . որովհետեւ միշտ աւար թո-
քեր ունէր , ու դժուարութեամբ շնչառու-
թիւն ընելու յաճախ ենթակայ էր : Ընմի-
ջապէս երբոր կրկին լոյսը դարձաւ , որ աս
աղէտալի դիպումսին մինչև երբորդ օրը ա-
մենեին լոյս չի կար , իր մարմինը գտնելու
ցաւ ըման ու առանց ապականութեան նը-
շանի մը՝ ճիշտ իր ինկած դիրքով , ու է-
վելի քնացած մարդ մը կերեւար քան թէ
մեռած : Բոլոր աս միջոցիս ես ու իմ մայրս
որ Սիսեմուսինք , . . . բայց որովհետեւ
առիկա ձեր ընելու պատմութեանը հետ կա-
պակցութիւն մը չունի , անոր համար ձեր
խնդիրը իմ մօրեղբորս մահուանէն անդին
չանցաւ . և անոր համար անով պիտի վեր-
ջացունեմ իմ նամակս . միայն թէ ներում
շնորհեցէք ինծի էվելցունել՝ թէ հաւա-
տարմութեամբ պատմեցի ձեզի որուն որ
կամ ես անձամբ ակնանատես էի , և կամ
ինչ որ անմիջապէս ան դիպումսը պատա-
հէլէն ետքը ընդունեցի ճշմարտութիւնը
փոխելու ժամանակ չեղած : Հաճեցէք ընտ-
րել աս պատմութեանէն ան պարագաները որ
խիստ կը յարմարին ձեր գիտաւորութեանը .
քանզի մեծ տարբերութիւն կայ նամակի ու
պատմութեան պատշաճաւոր նիւթերուն մէ-
ջը , բարեկամի եղած գրութեան ու հասա-
րակութեան եղած գրութեան մէջը : Մղջ
լիւր՝ :

Ծանոթ . « Բի-բի-բի »

Կոնստանտին :

« Ենամակը » որ ձեր խնդիրքին ղեջանե-
լով ձեզի գրեցի իմ մօրեղծօրս մահուանը
վրայ , կերևայ թէ ձեր հետաքրքրութիւնը
արթնցուցեր է գիտնալու թէ ի՞նչ վտիւեր
ու վտանգներ պատահեցան ինձի Սիսէնում
կեցած ատենս . քանզի կարծեմ թէ առջեւ
նամակիս պատմութիւնը հոն կտրրվեցաւ :
Մօրեղծայրս մեզ ձգելէն ետքը ես իմ
ուսմանս պարագեցայ՝ որն որ իմ անոր հե-
տը երթալուս արգելք եղեր էր , մինչև որ
լուսցվելու ժամանակը եկաւ : Բիւրեւ կո-
տարէլէն ետքը իրիկվան կերակուրի դացի ,
ու անկէ անկողին մտայ քնանալու , ուր որ
իմ քունս մեծապէս խախտեցաւ ու ան-
հանգիստ եղաւ : Բսկից առաջ խել մը
օջեր երկրաշարժութեան ցնցումներ կըլ-
լային՝ որոնք քիչ կըղարմացունէին մեզ ,
որովհետեւ խիստ յաճախ կըպատահին
Վալանիայի մէջ . բայց ան գիշերը
յատկապէս անանկ սատտիկ էին՝ որ չէ թէ
միայն մեր բոլորտիքը եղած ամէն բաները
կըշարժէին , հապա կըթըւէր թէ ճշմար-
տապէս կատարեալ աւերում մը կըսպառ-
նային : Մայրս իմ սենեակս վազեց՝ ուր որ
զիս դտաւ թէ կելլայիկոր զինքը արթնցու-
նելու համար : Գուրս ելանք տանը մէկ
փոքրիկ դուռից , որ ծովին ու շինուածքին
մէջ տեղը կիյնար : Եւ ինչպէս որ ես ան-
տոնէն տանընթեր տարեկան էի՝ չեմ գի-
տեր թէ աս վտանգաւոր առթիւ մէջը իմ
վարմունքս արիւթթիւն կոչեմ եթէ յան-
դըգնութիւն . քանզի Վիլիսի գերքը ձեռ-
քըս աւել ու ան հեղինակը կըքնէի , ու մին-
չև անգամ քաղուածներ կընէի անկից , որ
պէս թէ ամէն բան իմ բոլորտիքս կատար-
եալ ապահովութեան մէջ էին : Եւ բոր աս
վիճակիս մէջ էինք մենք՝ մօրեղծօրս մէկ
բարեկամը որ նոր եկեր էր Վալանիայէն
իր հետը տեսնովելու , մեզի ընկերացաւ .
ու տեսնալով զիս որ մօրս քովը նստեր էի
ձեռքս գիրք մը բռնած , մեծապէս կշտամ-
բեց անոր հանդարտութիւնը , որ ատեն որ
զիս ալ իմ անհոգ ապահովութեանս համար
յանդիմանեց : Բայտու ամենայնիւ ես իմ
ձեռքիս գիրքին կըղարապէի : Եւ թէպէտ
հիմայ առաւօտ եղեր է , բայց լոյսը չափա-
զանց նուաղ ու տկար էր . չորս կողմերնիս

եղած շէնքերը կըգողգողային . ու իրաւ մենք
բայ տեղ կոյնած էինք , բայց տեղը նեղ
ու ամէն կողմէն զոյ ըլլալուն առանց ստոյգ
և մեծ վտանգ կրելու ան տեղը չէր մնայ .
վէր . վասն որոյ մտածեցինք քաղաքէն
դուրս ելլալ : Դողովուրդը յետին շփո-
թութեան մէջ ինկած ետեւնուս կուգար , և
ինչպէս որ սոսկալի վախերով վարանման
մէջ ինկած մտքի մը սեւ իցէ թելադրու-
թիւն առաւել ևս խոհեմ կըթըւէր քան թէ
բուն իրենք , խուռն բաղմութեամբ չորս
կողմերնիս կիզկիզվէր դուրս երթալու ճամ-
բաներնուս մէջ : Բայտ բաւականին տունէ-
րէն հեռու տեղ մը երթալով կանկ առինք ,
խիստ վտանգաւոր ու զարհուրելի տեսա-
լանի մը մէջ տեղը : Վաղաքէն դուրս հա-
նելու համար մեր ապապրած կառքերը
նանկ ետ ու առաջ կըշարժէին , որ մեծա-
մեծ քարերով անոնք հաստատելով ալ
չէին կրնար անշարժ պահել : Դավը կե-
րեար թէ ետ կըդառնար իր վրայ՝ ու կը
քաշվէր իր եզերքներէն երկրին բռնական
շարժումովը . և գոնէ ճշմարիտ է թէ ծո-
վեզերքը խել մը ընդարձակեր էր , ու
բազմատեսակ ծովային կենդանիներ մնա-
ցեր էին անոր վրայ : Մեկալ կողմէն սե-
ու արսափելի ամպ մը հրեղէն օձապտոյս
շողի մը հանելով իր ետեւէն երկան բոցա-
վառ պոչ մը կըձգէր որ կընամներ փայլա-
տակմունքի բոցերուն , բայց շատ մեծ ա-
նոնցմէ : Բայտ վրայ մեր Վալանիայի բարե-
կամը՝ որն որ վերը յիշեցի , մեծ եռանդով
ու թախանձանքով իր խօսքը իմ մօրս ու
ինձի ուղղելով ըսաւ . « Թէ որ քու եղ-
բայրդ ու քու մօրեղծայրդ ազատեցաւ նէ
անշուշտ կըբաղձայ որ դուք ևս ազատիք .
բայց թէ որ ինքը կորսնվեցաւ նէ՝ ան-
տարակոյս իր բաղձանքը ան էր որ դուք
իւրմէն ետքը ապրէիք . ուրեմն ինչո՞ւ համար
ձեր փախչելը վայրկեան մը կուշացունէք » :
Բնենին մենք մեր ազատութեանը վրայ
չէնք կրնար խորհիլ թէ որ իր ազատու-
թեանը վրայով անստոյգ ենք՝ ըսինք իրեն :
Բայտ վրայ բարեկամիս մեզ ձգեց , ու յե-
տին տաղնապի մէջ ինկած վտանգէն ետ
քաշվեցաւ : Բնմիջապէս ասկից ետքը կե-
րեար թէ ան ամպը իջաւ ու բոլոր ծովը

ծածկեց . ինչպէս որ ճշմարտապէս Վազ-
րէս կղզին ու Սիսիուսի սարը բոլորովին
ծածկեց : Սայրս սաստիկ թախանձանքով
կրտիրպէր զիս որ անշուշտ փախչիմ , որն
որ սուրբութեանս պատճառովը զիւրու-
թեամբ կրնայի ընել . բայց իր վրայովը
կըսէր թէ՛ իր ծերութիւնը ու զերութիւնը
աս տեսակը Զանքերուն բոլորը անհնարին
կընէ : Բայց սակայն յօժարութեամբ մահ-
ուան պատահիլ կըցուցընէր՝ թէ որ ինքը
իմ մահուանս պատճառ չըլլալը տեսնալու
միտթարութիւնը կարենար ունենալ : Բայց
ես բացարձակապէս մերժեցի զինքը ձգելը ,
ու իր ձեռքէն բռնելով աւաջ կըտանէի .
մեծ դժկամակութիւն ցուցընելով ասոր
հաճութիւն տրւաւ : ու ինքըզինքը մեծա-
պէս կըկշտամբէր որ իմ փախչիւր կուշա-
ցունէր : Հիմայ սկսեց մոխիընէրը վրանիս
թափիլ՝ թէպէտ և չէ թէ խիստ աւատու-
թեամբ : Գլուխս դարձուցի ու թանձր
մուկ մը տեսայ ետենիս՝ որ կըհորովէր ե-
տենուս կուգար արագընթաց յորձանքի
նման : Ստածեցի թէ քանի որ լոյս ունինք
ճամբայէն դուրս ելանք , որ չըլլայ թէ մու-
թը կոխելուն հետենուս եկած բազմութիւնը
կոխկուտեն մեռցունեն զինքը : Հազիւ թէ
ճամբայէն դուրս ելելը էինք երբոր մթու-
թիւնը մեզ պատեց՝ չէ թէ ամպոտ կամ
լուսին չեղած զիշերի մը պէս , հապա ամէն
կողմանէ զայ ու բոլոր ճրագները մարած
սնեակի մը մթութեանը պէս : Բնատները
ուրիշ բան չէր լսէր՝ բայց միայն կնիկնե-
րուն կանջվառութեամբ , տղայաց ճիչը ու մար-
դաց աղաղակը . ոմանք իրենց զաւկները
կանչելով , ոմանք իրենց ծնողը , ուրիշնե-
րը իրենց երեխ . մէկը իր վիճակին մէկա-
լը իր ընտանեացը վիճակին վրայ ողբալով .
ոմանք բուն իսկ մահուան երկիւղէն մեռնե-
լու բաղձալով , ոմանք իրենց ձեռքերը
աստուածներուն վերցունելով . բայց մեծ
մասը մտածելով թէ վերջին ու յաւիտեանա-
կան զիշերը եկեք է , որ աստուածները ու
աշխարհը մէկ տեղ պիտի ապուկանէ* : Բ-

* Ստորիկեան ու Լպիկիւրեան փիլիսոփաները կը
կարծէին թէ աշխարհ կրակով պիտի աւերի , ու
ամէն բան նորէն իր առջի շիթութեանը պիտի
դառնայ , աս ընդհանրական հրդեհիս ապակա-
նութենէն դուրս չի ձգելով նաեւ բուն իսկ ազ-
գային ճատուածները :

սոնց մէջէն կային ոմանք ալ որ ճշմարիտ
երկիւղը երեակայական երկիւղով առաւել-
եա կըմեծցունէին , ու ահաբեկած ժողո-
վուրդը կըհաւտացունէին թէ Սիսիուս
իրօք բռնկէր կերէրկոր : Վերջապէս մէկ
աղօտ լոյս մը սկսեց երևիլ որն որ մեհր
կարծեցինք թէ էվելօք մօտահաս բոցավառ
բորբոքման մը կարապետն է ան ինչպէս որ
ճշմարտապէս անանկ էր , քան թէ օրվան
լուսնալը : Ինչեւիցէ աս կրակը մեզմէ հե-
ռու տեղ մը ինկաւ . անատները կրկին
թանձրամած մթութեան մը մէջ թաղվե-
ցանք , ու մոխիւրի ծանր հեղեղ մը վրանիս
անձրեւեց , որն որ պարտաւոր էինք ատեն
ատեն թօթվել վրանուս , չէ նէ պիտի ճըն-
շովէինք ու անոր գեղին տակը թաղվէինք :
Կրնայի պարծենալ թէ բոլոր աս սարսա-
փելի տեսարանիս ատենը մէկ հաւաքանք մը
կամ վախի նշան մը չեղաւ ինծմէ . միայն
թէ ան թշուառ բայց զօրաւոր մոխիւրութե-
անը վրայ հաստատված էի՝ թէ բոլոր
մարդկային սեռը նոյն աղէտովը պաշարված
էին , և թէ բուն իսկ աշխարհի հետը ես
ալ կըկորսուվէիկոր : Վերջը աս զարհու-
րելի մթութիւնը կամաց կամաց փարատե-
ցաւ ծխալից ամպի մը պէս , ու ճշմարիտ
ցորեկը դարձաւ , և արեգակն ալ երեւցաւ ,
թէպէտ և շատ աղօտ կերպով՝ ու ինչպէս
որ խաւարման ատեն կերեւայ : Բմէն առար-
կաները փոխված կըտեսնուվէին աչքերնուս՝
(որոնք չափազանց տկարացած էին) , ճեր-
մակ մոխիւրով ծածկված ըլլալով իբրեւ
թէ խորունկ ձուկի տակ : Գարձանք Սի-
սիուս ուր որ կըցածնուս չափ ինքըզինքը
նիս զօրացուցինք , ու յոյսի և վախի մէջ
վշտազին զիշեր մը անցուցինք , թէպէտ և
իրօք էվելի բաժանորդ էինք վերջինին
քան թէ առջինին . քանզի երկրաշարժու-
թիւնը տակաւին կըշարունակէր , ու շատ
յափշտակեալ մտօք մարդիկ վեր ու վար
կըվազէին զարհուրելի նախադուշակու-
թիւններով իրենց և իրենց բարեկամնե-
րուն տառապանքը ծանրցունելով : Բայց
մայրս ու ես մեր անցուցած ու տակաւին
մեզի սպառնացող վտանգին վրայ , մինչեւ
մօրեղբայրէս լուր մը առնելնիս՝ եղած տե-
ղերնիս ձգելու խորհուրդ չունէինք :

Գանք որ դուք աս պատմութիւնը պիտի
կարդաք առանց միտք ունենալու անիկա

ձեր պատմութեանը մէջ անցունել, որուն ոչինչ կերպով արժանաւոր է. և թէ որ անիկա պատասխանի մը արժանաւոր է՝ արդարեւ ան նեղութիւնը ձեր խնդրանայը ընծայելու էք: Ողջ լիւր՝:

Փօսիէյի լավային վաղելովը չաւերեցաւ. իր բարձր դիրքը ատ աղէտէն զինքը պահպանեց. հասարակ քաղաքում ու հրախառն մոխիրներու հեղեղին տակը թաղվեցաւ, որոնց վրայով Պլինիոս կրիստի: Ընդհանրապէս մեծ մասը կերեւայ թէ լուծական վիճակի մը մէջ իջած էր, որ զիւրաւ կրնայ բացատրուիլ. քանզի հրաբուխէն ելած ան բազմաւատ շողիները սաստիկ անձրեւի պէս կիջնային՝ որոնք կամ օդին մէջը մոխիրին հետը միացան, և կամ վար իջնալու խորքը իրենց հետը անանկ տեղավաճեց անքաւ տարին մոխիրները, որ չոր վիճակի մը մէջ չէին կրնար աղէկ մը մանաւան տեղավաճք: Ըստ ուրիշ ապացոյցներուն մէջը՝ մէկ կնիսն մը ոսկերտութիւն գտնելով ատորքի լիւրայ շտեմարանի մը մէջ՝ հանքային դանդաղածի մը մէջ թաղված, որ անոր կատարեալ ձեւը ընդունելու ու պահելու էր:

Գլխաւորը (Նիւտոն) Վրիստոս:

Եւ ուրանար թէ ուրիշ բաներուն զիտութիւնը շատ անգամ խիստ օգտակար են. ոմանք մասնաւոր անձանց, ոմանք ընդհանրութիւններու, ոմանք լիւր աղբերու, ոմանք ընդհանուր մարդկային սեւին, ոմանք ուղիղ իմանալու Վստուծոյ բանը, ու անանկ բուն խիստ Վրիստոսը ճանչնալու. մասնաւոր թէ որ և իցէ զիտութիւն մեր միտքերը կը բարձրացունէ՝ կը զոտէ՝ ու կընդարձակէ, ու անանկ առաւել ևս կը բարձրացնէ մեզ զինքը ճանչնալու: Բայց զիտութիւն մը սրճախի հարկաւորը ըլլայ հիւնայ թէ որ նոյն վարձանին չի նայիր, ամենակին օգուտ մը չի պիտի ընէ մեզի վերջին օրը. քանզի ի՞նչ օգուտ թէ որ ևս բոլոր ճարտարահար արուեստներուն ու զիտութիւններուն տեղեկութիւն ունենամ, ու կարող ըլլամ պէտք եղածին պէս գործածել զանոնք. ի՞նչ օգուտ թէ որ բոլոր տրամաբանական հանոնները զիտու մէջը զանձաժ

ըլլամ, ու կարող ըլլամ մարդուս հնարած բոլոր արուեստներուն ու ճարտարութիւններուն հետը վիճաբանիլ. ի՞նչ օգուտ թէ որ կարենամ բնական փիլիսոփայութեան անդունդներուն մէջը թաղվիլ, ու բոլոր աս պարոնի բաները իմանալ. ի՞նչ օգուտ թէ եկեղեցիին՝ ու աշխարհի ստեղծվելէն հետեւ բոլոր դարերուն ու տեղերուն պատմութիւնները տալիս ըլլամ, ու ամէն մէկ բանի պատահած ժամանակը զիտնամ: Ի՞նչ օգուտ թէ որ աստղերուն բազմութիւնը թըլելու ու զանոնք իրենց անուններովը կանչելու կարող ըլլամ, ու անոնց շարժումը մազի չի վերաբերիլ նկարագրելու, ի՞նչ օգուտ թէ որ բոլոր լեզուները հասկընամ, ու երկրի վրայ բոլոր աղբերուն հետ իրենց մայրենի լեզուովը խօսելու կարող ըլլամ. ի՞նչ օգուտ կըսեմ ամէն անոնցմէ: Բոլոր ասոնց վրայ առանց Յիսուս Վրիստոսի զիտութեանը յաւիտեան պիտի կողմնէմ ու կործանիմ. որովհետեւ երկինքին տակը Յիսուս Վրիստոսի անունէն զատ անուն չի կայ որով կրնանք փրկուիլ. ոչ ալ ուրիշ ճամբայ մը կայ որ հնար ըլլայ իրով փրկուիլ. բայց եթէ զինքը զիտնայ: Վանքի մինչեւ որ զինքը ճամբարու թիւում չի զիտանք, իրով փրկուիլ համար պահանջուած բաներուն մէկը չենք կրնար կատարել:

Մեծիւն-ըն-հազար-ն և ընդ-նգն-ըն-ն լիւր:

Երբեք կը պատահի որ մեծած անձանց մարմինները փառելէն ետքն ալ մազերը ու ըզունդները կաճին: Վարդապետն օրագրութիւն մը մէկ կին մը կը յիշէ՝ որուն մազերը մարմինին թաղվելէն քառասունիւր տարի ետքը սնուկին ճեղքաւորներէն դուրս ելելու էին: Ըստ մազերուն երբոր զբաղվեցաւ իսկոյն փշեցան փոշի եղան: Միջին դարերուն մէջ տասնէ զիտուածները պատճառ կը լլային մեռելու անձը կախարդ սեպել տալու. վասն որոյ իրենց մարմինները կը հանվէին՝ ու երկունքն ետքը մոխիրները հովերուն տրվելով ցիրուցան կը լլային:

Կոյրերը խորթուհիներ :

Տեպողական կարողութիւնը ան զգայու-
թիւնն է՝ որով մարդիկ իրենց բոլոր
տիքը եղած իրերուն յատկութիւնները իսկ
և իսկ կը ճանչնան : Եւ զգայութեանս զոր
ծողութիւնները անանկ արագ՝ բազմակերպ
և ընդարձակ են , որ մարդս բոլորովին ա-
սոր կոտորակին՝ միւս զգայարանները գը-
րեթէ զանցաւութեան ձգելով : Սարգս չի
սպասեր ծաղիկի մը հօտը առնելու՝ անոր
անունը իմանալու համար . իր աչքը հե-
ռուէն ու վաղվաղակի ճշմարիտ տեղեկու-
թիւն մը կը բերէ իրեն՝ անոր յատկութեան
ցը վրայ , որով կը կարողանայ վարդ կամ
շուշան անուանել զանիկա :

Եւ զգայութիւնս բոլոր ուրիշներուն
վրայ գերազանցութիւն ունենալով՝ գիտու-
թիւն ստանալու համար բացարձակապէս
հարկաւոր ըլլալ կարծւում էր ան . ու
բոլոր դարերուն մէջ ՚ի ծնէ կոյր տղայ մը
զժբաղդութեան ժառանգ համարված էր , ու
տգիտութեան և դատարկութեան մէջ ապ-
րելու վճռւում էր : Սքանչելի բան որ ա-
սանկ եղած ըլլար , ու առաւել ևս սքան-
չելի որ ասանկ ըլլալ կը շարունակէ :

Աքերը իրաւցունէ մտքին մեծ պատու
հաններն են . բայց երբոր ասոնք զոյց ըլ-
լան , ուրիշ ծակեր կամ ճեղքումներ
կան՝ որոնցմով շատ լոյս կրնայ ներս խըր-
կըվել : Սէկը չի կրցաւ իմանալ՝ բայց
միայն իրենց ուշադրութիւնը աս նիւթիս
վրայ հաստատողները իմացան , թէ Շօշա
փելիք՝ Վսելիք՝ Նաշակիլիք՝ և Հոտոտիլիք
կոչւած զգայարանները սովորաբար Տե-
սանկ լիքով կատարված գրեթէ բոլոր պաշ-
տօնները վարժութեամբ կրնան կատարել :
Հանքաբանը պիտի տարակուսի թէ որ իր
մէն խնդրելի որ մութ տեղը որոշէ թէ որն
է կիճը ու որն է կիր շինելու քարը : Եւ
մայափոխը աչքերը կապած պիտի սխալի
ճշմարիտ դրամը սուտէն որոշելու . ու ո՛ր
իցէ մարդ անտեղի բան պիտի կարծէ թէ որ
իրմէն արհամարջով զրուցել թէ երկու
մարդոյ որ բարձրագոյն հասակ ունի ,
միայն անոնց շիտակ կայնած ատենը խօ-
սելին լսելով : Եւ սակայն կոյր մարդիկ
բոլոր աս բաները կընեն , թէ որ իրենց
սիրտ տրվի իրենց զգայութիւնները մշա-
կելու :

Գիտութիւն ստանալու վրայով համա-
ռօտաբար այսպէս է բանը . մարդիկ իրենց
հինգ զգայարաններուն զործածութեամբը
բան կը սորվին , բայց հազիւ երբեք անոնց
մէկը ծայրագոյն կատարելութեան մը հաս-
ցունելու չափ կը բանեցունեն : Եւրոթ թէ որ
մարդ մը մէկ զգայարանէ մը զուրկ ըլլայ՝ ու
մնացած չորսը ուրիշ մարդոյ իրենց բոլոր
հինգ զգայարանները բանեցուցած չափէն
էվելի բանեցունէ նէ , անոնցմէ էվելի գի-
տութիւն պիտի ստանայ : Եւ որ հինգ տա-
ղանդ ունի , հինգ տաղանդ ալ կրնայ վա-
տրկիլ . բայց ան որ միայն չորս ունի , է-
վելի ժրութեամբ բանեցունելով զանոնք՝
էվելի շահ կրնայ ընել , ու իր զբաղմուն-
քը վերջապէս առաւել ևս մեծցունել քան
թէ միւսը :

Ասոնք սոսկ խորհուրդներ չեն . պատ-
մութիւնը շատ օրինակներով կը հաստատէ
ասոնք : Եհուսակ ան հաւակաւոր Սան-
տէրօն փիլիսոփան որ յաջորդեց Իսահակ
Նեթին , ու Շքափուտի համալսարանին
մէջը չորս տարի մաթեմատիկական գիտու-
թեանց վարժապետ եղաւ մեծ համբաւով :
Ինքը ՚ի ծնէ կոյր էր , և սակայն խիստ ի-
մաստուն փիլիսոփայ եղաւ : Եւ որ օրինակ-
ներ կրնան առաջ բերվիլ որ հաստատեն
թէ կուրութիւնը անյաղթելի խոչընդոտ մը
չէ ուսման . բայց ան օրինակները միայն կը
ցուցնեն թէ ան անձինքը անանկ կարգէ
դուրս մտաւոր կարողութեան ձիւրքեր ու-
նէին , որ կրնային յաղթել ամէն ան դժուա-
րութիւնները՝ որ հասարակ մարդիկը կը տը-
կարացունեն : Եւ ատ տեսնող մարդիկ ա-
ռանց վարժութեան մեծութեան հասած են ,
շատ կոյր մարդիկ կուրութեան հակառակ
իմաստուն եղած են . բայց բովանդակ մար-
դիկ եթէ տեսնող և եթէ կոյր՝ թէ որ ա-
ռանց վարժութեան մնան , տգէտ և անի-
մաստ կը մնան :

Ի վերայ այս ամենայնի կոյրերուն վար-
ժութեանը համար ուսումնական ոճով բան
մը եղած չէր՝ մինչև քառասուն տարիի չափ
առաջ , որ ատեն Պարոն Հոուի բարեա-
յապարտ Կաղղիային նոյն ջանքը սկսեց
ընել : Սէկ օր մը ինքը քանի մը բարե-
կամներու հետ Գարիգի մէջ կը պըտրէր ,
ու տեսան որ քանի մը կոյր անձինք երա-

ժըշտական դործ իքներով կընուագէին : Իւրենց երաժշտութիւնը ներդաշնակութիւն մը չունէր : ու Հառիին բարեկամները ըստ պէի մը չափ կայնելէն հոքը առաջ անցան , բաւականատու թէ կոյրերուն քանի մը դրամ տալովնին իրենց պարտաւորութիւնը կատարեցին : Իայց Հառի այսչափովս չի բաւականացու . ինքը սկսեց խորհիլ թէ արդեօք կարելի չէ որ աս մարդիկը ուսումնական ոճով նուագել սորվին , ու քիչ մը մտածութիւնը զինքը համոզեց թէ կարելի է անանկ ըլլալ : Ընկէ հոռ ինքն իրենը մտածելով յառաջացաւ մինչև որ համոզվեցաւ թէ շատ կերպ գիտութիւններէն ուր հոնք կրնան բացվիլ անոնց : Ըն ժամանակէն սկսեց աս բանիս պարտաւորել , ու իր պաշտպանութեանը տակը քանի մը կոյր տղաք առաւ անոնք վարժելու համար : Իր յաջողութիւնը շատ մեծ եղաւ . իր ցուցուցած փորձութիւնները հասարակաց շահասիրութիւնը արթնցուցին , անանկ որ Պաւստայի կառավարութիւնը ևս սկսեց օգնել աս բանիս :

Հառի գիրքեր հնարեց որ իր աշակերտները կրնային կարդալ անոնք . հասարակ դրբի գիրքերուն պէս թուղթին երեսին հետը հաւասար միջանով տպագրոված չէին գիրքերը , հապա առանց միջանի թուղթին երեսը բարձրկել տպաւորոված էին անոնք . ու աշակերտները թուղթին վրայ ցցուած գիրքերը մատովնին զգալով կրկարդային : Եւ պէտ և խիտ խոշոր և անարուեստ բաներ էին ասոնք , բայց գիրքի տեղ կըծուռայէին կոյրերուն , ու շատ կերպ գիրքեր տպագրվեցան ասանկ : Պարոն Հառին վեց աշակերտներէն մէկը մաթեմատիկայի մէջ հաշիւաւոր եղաւ , ու մէկը հիմնայ Պիտագորայի աղբային ժողովին անդամն է՝ Ուստեպագ անունով : Ինքը ուսումնական ու բանիւրուն մարդ մըն է . քաջակիրթ քաղաքական ճարտար ստեղծարար , ու բաւական պատիւ ունի Պիտագորայի ժողովին մէջը : Ճմարտապէս գուարձուի բան մըն է տեսնալ զինքը որ ժողովին մէջը կեցայ ու կը սկսի ատենախօսիլ և ունկնդիրներուն շնորհիւ իր խօսքը : Իր խօսիլը արագ ու եռանդուն է . իր զգացումները զօրաւոր են՝ ու զօրութիւնը շարժում կուտան իրեն . և աս

կայն իր մարմնոյն ամէն մէկ շարժումը աղէկ յարմարված է :

Իայց դառնանք Պարոն Հառին և իր վսեմ ձեւնարկութեանը . կառավարութիւնը շուտով ձեւնարկութիւն ըսաւ իրեն , ու իր կառավարութեանը և ինքնաշարժութեանը տակը դպրոց մը հաստատվեցաւ : Օննազան եղանակներ հնարեց հասարակ վարժութեան զանազան մասունքները սորվեցունելու . աշխարհագրութիւն կը սորվեցունէր թուղթին երեսին վրայ գիծերը բարձր տպաւորած աշխարհացոյցներով . թուաբանութիւն՝ քառակուսի ծակերով լեցուն տախտակով մը , ուր որ աշակերտները միաւոր թուանշաններով տնկերը շարելով վարժապետներուն ըսած հաշիւը կրկատարէին : Երաժշտութիւն՝ թուղթին վրայ ուռեցած ու շոշափելի խաղերով . գիր՝ թուղթին վրայ գրիչը շիտակ առաջ խաղցունող դործիքով մը :

Ըս ճմարտապէս մեծ և բարի անձս իր բոլոր ժամանակը իր աւարկային տըւաւ , ու փարիզի Պալլոցը իր կառավարութեանը տակը շատ ծաղկեալ ու պիտանի եղաւ : Իր աշակերտներուն կըսորվեցունէր ուսուցանանկէ՝ հուսէ՝ մանկ , սակաւներ՝ խօսիչներ՝ խաղաղաններ՝ մուճակներ և ուրիշ ասոնց նման բաներ շինել : Սիրտ կուտար անոնց ուսուէլ ևս դժուարին արհեստներ բանիլ , ու շատ չանցած կոյրերուն համար եղած բոլոր տպագրութիւնը ըստ մեծի մասին իրենք կոյրերը կրկատարէին :

Իր դպրոցին համբաւը շուտով տարածեցաւ բոլոր Եւրոպայի մէջ , ու իր աշակերտներուն շատերը վաստակ ընելու ու օգտակար ըլլալու տեղեր գտան : Ինքն ալ Պետրոպոլիի Վասիլեւսկան Վառաժարութիւնէն հրաւիրվեցաւ նոյն քաղաքը երթալու , ու ան տեղի կոյրերուն համար դպրոց մը հաստատուէլ : Ընդունեց ան հրաւերքը ու յաջող գտնելեցաւ նոյն դործին մէջ . ու իր մեռնելէն առաջ ուրախութեամբ իմացաւ որ Եւրոպայի զանազան մասերուն մէջ կոյրերուն վարժութեանը համար պատրաստութիւններ եղած էին :

Տասներկու դպրոցներ հաստատված են հիմայ գլխաւորաբար Վերմանիայի ու Բնգիայի մէջ , ուր որ կոյրերը կրկրթվին :

Ըստ դպրոցներուն միջնորդութեամբը կոյւ
րերը հարկաւորապէս իրենց վրայ դալու
տգիտութենէն աղքատութենէն և ուրիշե-
րէն կախում ունենալէն ինքըզինքնին կա-
զատեն : ու կըլլան լուսաւորեալ գործուն-
եայ և օգտակար մարդիկ : ու անոնցմէ դուրս
կըլլան միտքերնուն վստահացած և արհես-
տի մը տէր եղած : որով կրնան արդար ապ-
րուստ մը շահիլ : Ի՛նչպէս ընդդէմ պիտի
ըլլայ ան տեղերը գտնելով իւրերուն վի-
ճակը՝ մեր կողմերուն անօգնական տգէտ և
կոյր մարդուն վիճակին : որ բոլոր իր կեան-
քին մէջ ուրիշներէն կախեալ ըլլալու
նուստ գգացումովը կապրի : որ բոլոր ձը-
մեւը կրակին քովիլը անցունելէն ետե՛ւ իր
ամուսնւան օրերը տանը քովը արեւին շուքը
նստած տղայական խաղալիքներով անցու-
նելու համար խարխալելով դուրս կելլայ :
որ փողոցներուն անկիւնները նստած կամ
շուկաները ու դռնէ դուռ թափառելով ու
ղորմութիւն կըմուրայ : որ ցորենները ու
գիշերները միայն ջերմ և ցուրտ գգալովը
կըթըւէ : որ իր մերձաւորներուն կամ օ-
տարներուն ողորմութեանը օրական բաժի-
նովը ապրելու ժամանակին վախճանը չի
տեսնար՝ բայց միայն ան ատենը՝ երբոր հա-
սարակաց ողորմութեամբը ապրելով մեռ-
նելու համար աղքատանոցի մը շրջապատին
մէջը կըմոնայ :

Ամերիգայի Միացեալ Նահանգներուն
մէջի կոյրերուն վարժութեանը համար դըպ-
րոց մը հաստատուելու առաջին ջանքը Պօս-
դէնցի Ֆիշըր անուն վարժապետը ըրաւ :
ու շատ յարգութեան արժանաւոր է ինքը՝
աս նիւթիս վրայ իր ցուցուցած յարեաւու-
թեանը համար : Վանի մը ուրիշ առա-
տասիրտ և մարդասէր անձինք ալ շուտով
իրենց ուշադրութիւնը աս առարկայիս
տըւին . և թէպէտ իսկ մը տարի անցաւ
մինչև որ յայտնապէս բան մը կըցան ընել :
բայց լռիկ կերպով ու յարստեւութեամբ
կըշարունակէին գործը : Ինկերութիւն մը
հաստատուեցին : ու Աւրոպայի զանազան
դպրոցներէն բոլոր տեղեկութիւնները հա-
ւաքելու ու վարժապետներ և գործիքներ
բերելու համար մէկը խրկեցին :

Միտքերնին հաստատուեցին որ հասարա-
կութեան բոլորը ընելուն առաջ՝ քաջ ու

կատարեալ փորձ մը ընեն : ու հաւքըլած
ստակին բոլորը վեց կոյր տղաք վարժեալու-
վրայ ծախեցին : Ըստ լռիկ պատրաստու-
թեամբս գրեթէ տարի մը անցնելէն ետքը
ներկայացան : ու վարժութեան զանազան
մասերուն մէջը քննըվեցան : Առաւարտ-
ութիւնը մեծ հաճութիւն ցոյց տալով առատ
պարզեւ մը շնորհեց նոյն վիճակին մէջի
բոլոր աղքատ կոյր տղոցը դպրոցին վար-
ժութիւնը ընդարձակելու համար :

Հասարակութեան առջև ալ քանի ան-
գամ երեցան աս տղաքը : որ մեծ շահա-
խնդրութիւն մը արթնցուց անոնց մէջը :
Ի՛նչպէս սկսեցին ջանալ դրամագլուխ
մը հաւաքելու որով ընդարձակ ու հաստա-
տուն հիման վրայ հաստատովի դպրոցը :
Հասարակաց օգտին համար եւանդ ունե-
ցող անձինք ալ շատ ստակ տըւին : ու իշ-
խանաւոր անձ մը ևս իր տունը ընծայեց :
Վանի մը ամիսին մէջը դպրոցը մեծցունե-
լու բաւական գումար մը հաւքըվեցաւ : ու
աշակերտները իրենց նեղ և անյարմար
բնակութենէն լայնարձակ բնակութեան ան-
ցան :

Հիմայ աշակերտաց թիւը արագապէս
կէվելնար : ու 1834ին քառասունէն էվել ըլ-
լալով՝ վերակացուները մտածեցին որ դըպ-
րոցին շէնքը մեծցունեն :

Ըստ դպրոցին հաստատութեանը գլխաւոր
նպատակը ան է որ կոյրերը բուն իսկ իրենց
աշխատութեամբը ապրուստին ճարելու
կարողանալով ողորմութեան կարօտ չըլ-
լան : Ի՛նչոր համար առաջ մտաւոր վար-
ժութիւններու կըկըթըվին . աշխարհի մէջ
իրենց ճամբան հանելու համար ինքըզինք-
նին բոլորովին բաւական կարծի կըսոր-
վին . հասարակ վարժարաններու մէջ ա-
ւանդըված ամէն վարժութիւնները կըն-
դունին . ու շատերը ստպատներ՝ խտրնի-
ր և ասոնց նման բաներ շինել կըսորվին :
Երաժշտութիւնը ու երաժշտական գոր-
ծիքներ չալելը ևս կըսորվեցվի աս դըպրո-
ցիս մէջը : ու արդէն աշակերտները շատ
դժուարին բաներ կրնան վարպետութեամբ
երգել :

Բայց կոյրերուն յառաջադիմութեանը
խիստ մեծ նպաստ ընծայողը դպրոցին տը-

պարանն է, ուր որ հիմայ գիրքերը շատ լաւագոյն կերպով կը տարագրվին, ու Նւրապայէն եղածներէն շատ էվելի զիւրազին կելլան:

Հիմայ յայտնի կերեայ թէ սա դարոցը շատ աղքատ կոյր անձինք պիտի կարողուցունէ իրենց սարքստը ճարելու, ու ասանկ քաղաքական բարիքը էվելցունելու պատճառ պիտի ըլլայ. ու անտարակոյս հարիւրաւոր կոյր տղաք պիտի պատրաստէ ընկերական՝ բարոյական՝ ու մտաւոր վայելչութիւնները ճաշակելու, որոնք հարստութեամբ ստացված բանի մը հետ չեն կրնար բաղդատվիլ:

Ստախոսութեան լարժապետները ծնողներն են:

Երվանդըվի թէ շատ ծնողներ իրենց դաւկրներուն մանկութենէն ստախոսութիւն կը սորվեցունեն անոնց: Եւ բանս իրենք կրնեն հաւանականաբար առանց դժաւուր անոր զօրութիւնը: (Օրինակի աղաղաւ մայրը դուրս կերթալոր կամ գործով մը և կամ իր բարեկամներուն հետ անցունելու ան օրը: ու տղան կուրայ և կուզէ իր հետը երթալ: Տղան ընկցունելու համար մայրը կըսէ անոր թէ քանի մը ըտպէէն շուտով պիտի դառնայ. բայց իր դիտաւորութիւնը սա չէ: Ինքը իր զաւկին սուտ մը կը զրուցէ, և միայն այսչափով բանը չի վերջանար: Ինքը ժամանակ մը կը ցուցնէ անոր, ու տղան մեծ անհամբերութեամբ կըստպասէ իր դառնալուն: Եւ մէկ ժամը տարի մը կը թըլի անոր. ու երբոր վերջապէս դառնալ տուն դայ, տղան կըսէ իրեն, թէ դուն ըսիր ինծի որ քանի մը ըտպէէն պիտի դայիր, ու բոլոր օրը չեկար: Իր մօրը խօսքին վրայ ունեցած իր հաւատարմութիւնը ալ հիմայ կը տկարանայ, ու մայրը կը պարտաւորի ուրիշ անգամ էվելի ստութիւններ հրնարել անկիս համոզելու համար: Ծնողքը սա ճամբան երկար չի շարունակած տղան անոր խաբէբոյութիւնը կը հասկընայ. և սոսիկա հասկըցածին պէս ալ կը դադարի իր ծնողացը խօսքին հաւատարմութիւն ընելէն: Ալ էվելի գէշը ան է որ երբ իրենց ծնողներէն ասանկ օրինակներով վարժըվին, ուրիշ բան չի կրնար յուսացվիլ անոնցմէ, բայց եթէ որ իրենք ալ անձամբ անձին

ստութեան պիտի սկսին: Ինքըղենքնին ասանկ օրինակներու յարմարելու խիստ զիւրաւորաւորաւոր են անոնք: Սարգիկ իրենց վատթար բնութեամբը շատ էվելօք հակամիտեալ են ստութեան քան թէ ճըշմարտախօսութեան. ու երբոր սա չար բնութեամբութիւնը ծնողական օրինակներով քաջալերվի, ի՞նչ կրնանք յուսալ՝ բայց եթէ խիստ ցաւազին հետեանք մը: Եւ մարդը որ իր մանկութեան բոլոր օրերուն մէջ ասանկ օրինակներով ստախոսութեան սորված է, արդեօք ճշմարիտ պիտի խօսի:

Չենք կրնար դոնալ զիպուած մը՝ որուն մէջը պատշաճաւոր ըլլայ սուտ խօսքով տղաքը խաբելը: Տղաքը բնականաբար հակամիտեալ են իրենց ծնողացը հաւատալու. բայց երբոր դոնան թէ սխալ տեղ դրած են իրենց հաւատ սրմունքիւնը, թէ իրենց ծնողները կը խաբեն զիրենք, անանկ կը վնասի իրենց բնաւորութիւնը որ իրենց կործանմանը պատճառ կը ըլլայ: Ծնողները մշտ պարտին ճշմարիտը խօսիլ իրենց զաւկրներուն տարապոյման պարզութեամբ, ու պարտին ի գործ դնել իրենց զօրութիւնը զաւկրներին համոզելու՝ որ ամենին առանց խաբէութեան ճշմարիտը խօսին:

Բայց կարելի է որ մէկը ըսէ թէ պիտի բաներու մէջ սուտ մը խօսելով տղան խաբելը բան մը չի: Եսիկա չարաչար սխալ մտնք մըն է: Չէ՞ որ Քրիստոս մեզի կըսէ թէ քիչիկ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ, և թէ ան որ քիչին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ է: Եւ որ պիտի բաներու մէջ սուտ կը խօսի անտարակոյս մեծ բաներու մէջ ալ կը խօսի: Ծնողները ամէն բանի մէջ իրենց զաւկրներուն օրինակ պիտի ըլլան: Կուզեն որ զաւկրներն ինքն ճշմարտախօս ըլլան, ուրեմն թող զգուշ կենան որ իրենք բնաւ սուտ չի խօսին անոնց:

Ստախոսութեան հիմանէն Պընիանին Երանքն զայ:

Եւ գործքիս երկրորդ մասը՝ որ կը շարունակէ ինքը Եւ տեմարանիս մէջը տպագրել, հիմայ վերջացուցինք, որովհետեւ հաստատեցինք որ սոսիկա բանական գիրքը շատ ապօքի, իր դժուարիմաց նիւթերուն վրայ համառօտ բացատրութիւններով: Իսկ դրբին անունը կը կոչվի՝ Քրիստոսի Դաստիարակութիւնը, որ շատ չանցած կը յուսանք հրատարակել մեր շահախնդիր ընկերացիներուն: